ցուրտ է, օրինակ. Նամակերտում, Ղառղունում, Սվարանում ամառը բաւական շոգ է անում, սակայն դրանից քիչ հեռու՝ Սանգիբարանում, Ներքին Խոյգանում, Դանում, Բոլորանում երբեմն Յունիս ամսին անգամ գիշերներն այնպիսի ցրտեր են անում, որ մարդ գիշերը երբ մտնում է անկողին, հաճուքեամբ ծածկում է վերան բրդէ տաք վերմակը և անվերջ դիտելով գեղեցիկ և բանաստեղծական երկինքը՝ քնում է։

Բուսականութիւն: Փէրիայի հողը բերրի է և արգաւանդ, մի հանգամանք, որ նպաստում է առատ բուսաբերութեան։ Ձիշդ է, գաւառը զուրկ է անտառներից, բայց հարուստ է բարեբեր դաշտավայրերով, սիրուն հովիտներով և լեռնադաշտերով, ուր մշակւում են ամեն տեսակ ընտիր հացահատիկներ, բուսնում բազմատեսակ պտղատու ծառեր, զարգանում խաղողի այգիներ և արդիւնաբերական բոյսեր։ Իսկ հրաշալի բարձրաւանդակները և հովասուն արօտատեղիներն իրենց հարուստ խոտերով ու բոյսերով նըպաստում են անասնապահութեան և խաշնարածութեան. շնորհիւ այդ բարիքների առատութեան ճոխանում է ամբողջ Փէրիայի գաւառը։

Մշակւող բոյսեր, հացահատիկներ եւ մրգեր: Սրտերում և այգիներում մշակւող բոյսերի, հացահատիկների և մրգերի գլխաւոր տեսակները հետևեալներն են.—ցորեն, գարի, հաճար, կուտահատ (որից ձէթ են պատրաստում տան գործածութեան համար), արևածաղիկ, եօնջա, կորնկան, զոռատ, շաւդառ, ղառագուռա, հօլլար, կէվտանա, ջրկոտեմ, մաշ, թարխուն ,սուսամբար (զամբախ), գազար (քաշուր), թրէֆ, ճակնդեղ (ջաղնդար), ռեհան, անանուխ (թեր), դդում, գետնախնձոր (քիչ է), լոբի, ոսպ, սիսեռ (շատ քիչ), բակլայ, խաշխաշ (քիչ), քալ (սեխ), ձմերուկ, վարունգ և այլն։

Դաշտային բուսականութիւն (ինֆլաբոյս): Դաշտերում բուսնում են հետևեալ բոյսերը.—սինձ (որից աղցան